

Գարձուր աչքերդ տրտմասուզ,
 Գարձուր զանոնք շիրիմներէն մահերգակ,
 Տես, շուրջդ արեւն ինչպէս կեանքի կը կանչէ,
 Կը խայտան խոտն ու ծաղիկ...
 Դուն ալ քնքուշ, վարդ էակ,
 Ապրէ՛ զըւարթ, աչքըդ յառած երկնքին:

Թիթեռն ինչպէս, կամ մուխն անյայտ սուրացող,
 կամ փոսուռայ, որ մէկ գիշեր կը հրճուի
 ճանճանչելով ոստոստուն,
 Յաւիտենին հանդէպ մարդն ալ զաղփաղփուն,
 Կ'անցնի կ'երթայ անհաշիւ...:
 Կ'անցնի ամէն ինչ, կ'անցնի փառքն ամպի պէս,
 Թշուառութիւնն ալ կ'անցնի՝ վէրք մը բացած:
 Ու վիրաւոր՝ բոլոր մարդիկ նետերով
 Սին փառքերու, կամ ցաւերու վիշապին,
 Կ'իյնան իրենց ճամբուն վրայ...:
 Տժգոհ, անյագ, աչքերնին բաց այս կեանքին:
 Մահուան դժխեմ թելին տակ
 Խմբուած լայն բազմութեան մէջ տարասեռ,
 Ո՛վ կրցած է դիմագրաւել աւերին,
 Զոր մահն անվերջ կը ցանէ:
 Ինչո՞վ կեսար մը, Աննիբալ, Նափոլէոն,
 Հոմեր մը կամ Պինդար, Տանդէ ու Միլտոն
 Կը տարբերին մահուան դէմ,
 Սա շիրմին մէջ հանգչող անփայլ գեղջուկէն:
 Ափ մը փոշի ամէնքէն, կամ արդէն իսկ
 Հովէն տարուած, լոկ յիշատակ մ'անունի:
 Եւ ի՞նչ Հոռոմէն, կամ Աթէնքէն փառապանծ,
 Այսօր մնացած է կանգուն,
 Դիւցազներէն, հանճարներէն, այն կեանքէն,
 Հրաշապատում ու բեղուն,
 Որ զարմանքն էր և օրինակ աշխարհի.
 Կո՛յր աւերակ, անխօս փլատակ, մոխրակո՛յտ,
 Որոնց վերեւ հըպարտ անգղեր կը թառին,
 Եւ ծերպերուն մէջ բուրբ մահ կ'ողբերգեն,
 Հեզնելով ինչ որ կամքն ու միտք մարդկային
 Կերտած է ձեւ, մարմին տալով բիրտ նիւթին:
 Ակրոփողեան ձեռակերտներն արուեստի
 Ու Պարթենոնն հոյակապ,
 Աթենասի նըւիրուած,
 Մընունդ մտքին Փիդիասի
 Ու Պերիկլեան հօր կամքին,
 Ինկած կ'ողբան այսօր դարերը նախկին:
 Ու դեռ տաճարն թէսէոսի հոյանուն,
 Եւ Բագոսեան թէատրոնն,
 Ուր սէր, հաճոյք սրտերն անզուսպ գրկեցին,

Իբրեւ լքուած գեղեցկութիւն՝ տրտմօրէն
 Մեծ պարապին կը նային:
 Կը սըզան այսպէս տակաւին փառագուրկ՝
 Ասիոյ հողերն և յունական խտալիան,
 Ուր մեծութեան և շնորհքի
 Գանձեր ցանեց խիզախ հանճարն ատտիկեան:
 Հըռոմն ահա՛ մեծագօր,
 Ու իր փառքերն անդարձ՝ շքեղ դարերու:
 Վըկայ Փորուսն ընդարձակ,
 Ու կամարներն յաղթական
 Տիեզերական կայսրերուն՝
 Սեւերոսի, Կոստանդինի, Տիտոսի,
 Հեաքէր անցեալ մեծութեանց:
 Կրքի վայրագ յուշարձան՝
 Անփիթատրոնն արիւնոտ, ուր մարդ-գազանն
 Հոռոմի աչքին կը պարզէր
 Խենեշութիւնն իր բարբերուն ապրտամբ:
 Ահա դամբանը Կեկիլիա Մեդելլայ,
 Տիկնոջ կասսիոյ, եռապետին մեծանուն,
 Շքեղագոյնն Ապպեան ճամբուն զարդերէն,
 Անշէջ սիրոյ մահարձան՝
 Ուր ագուաներ տրտմաթախիծ կը վայեն:
 Կարակալեան հսկայակերտ շերմուկներն,
 Ուր հեշտութիւնը կը պաշտուէր տապագին,
 Ու տաճարն ալ խաղաղութեան, ուր Հոռոմ
 Կը խաբէր միշտ ինքզինքն, ուազգերն համօրէն,
 Յուշէր միայն՝ թաղուած կեանքի մ' հինաւուրց:
 Արդ, անոնց վրայ կը սաւառնի յաղթական
 Համայնաչափ ժամանակն,
 Լոկ գերագօր տիրակալ՝
 Կեանքի հանուր ձեւերուն:
 Ու մայր բնութիւնը թարմագեղ և միշտ նոր,
 Որ մահերէ վերջ կը յառնէ հրաշակերտ
 Միշտ աւելի՛ գեղեցիկ,
 Յաւետասքանչ վերածընած անխափան՝
 Կը դաշներգէ մեծ գոյութիւնն անըստեղծ,
 Որ ամէն ինչ կը շարժէ,
 Որ վախճանն է անշարժ, անծին, անխոտոր:
 Ու կեանքն այսպէս համաշխարհիկ և բեղուն,
 Կը դառնայ շուրջն արեւուն,
 Մինչ մասնական գոյակներ,
 Ինկած որպէս գոհեր շարժման ընդհանուր,
 Իրենց մահով տալով ծընունդ ուրիշին,
 Փառքը կ'երգեն յաւերժալոյս էութեան:

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

(Շարունակելի)



ՀԱՆԳԻՍ ՀՈԳԻՈՅ

Հ. ԱԼԵՔՍԻՍ Վ. ՅՈՎԱՏՔԵԱՆԻ



Փետրուար 25 ... Ս. Ղազարու մահա-
 ղանդը դարձեալ կը հեծկլտար ծանր ու թաւ
 ղօղանջներով, ու ամէնուս սիրտը կը համա-
 կէր դառն կսկիծով:
 Հ. Ալեքսիս Վրդ. Յովսէփեան վախճա-
 նած էր:
 Տասնեւհինգ օրէ ի վեր կը տառապէր սրտի
 ծանր տաղնապէ. բժշկական խնամք ու դար-
 ման լաւ ճամբու վրայ դրած էին հիւանդը,
 որ երկար հանդատի պէտք ունէր. կը յուսա-
 լինք որ հետզհետէ վերագտնէր իր առողջու-

թիւնը. բայց աւա՛ղ... Մեծ պահճի առաջին
 առաւօտն իսկ կանուխ ցաւալի լուրը տարած-
 ուեցաւ վանքին մէջ:

Խոր վշտով կ'արձանագրենք այս տողերը,
 հանդուցեալին շիրմին պսակ մը զետեղելու
 յոյսով, ի մխիթարութիւն իր հեռաւոր սի-
 բերիներուն եւ բոլորիս:

Հ. Ալեքսիս Վրդ. Յովսէփեան ծնած էր
 Արաբկիր 1878-ի Փետրուար 8-ին, եւ սուրբ
 աւագանէն կոչուած Յովսէփ: Առողջ, ժիր եւ
 կայտառ պատանի մը, 1894-ի Սեպտեմբեր
 25-ին կու դայ Ս. Ղազար իր հօրաքրոջ դաւ-
 կին՝ Յակոբ Սիրունեանի հետ. միասին կը
 մեծնան ու կը դարձանան Աստուծոյ տան
 մէջ, միասին կ'անդամակցին Միաբանու-
 թեանս 1899-ի Ապրիլ 30-ին ու կը բարձրա-
 նան քահանայութեան սուրբ աստիճանին
 1902-ի Օգոստոս 17-ին. Հ. Ալեքսիս Յով-
 սէփեան եւ Հ. Թէոդոր Սիրունեան, ուրիշ
 քանի մը դասընկերներու հետ:

Այնուհետեւ Հ. Ալեքսիս կը նուիրուի ու-
 սուցչական եւ առաքելական զործունէու-
 թեան, նախ վանքին մէջ, ապա Արեւիք: Եր-
 կար տարիներ կը մնայ Պոլիս, ու հոն կ'ան-
 ցընէ իր քահանայական կեանքին մեծ մասը:
 Քիչ ժամանակ մնացած է վանքին մէջ, զա-
 նաղան անդամներ Պոլսէն դառնալով. ժա-
 մանակ մը վարած է վանքին մէջ նսեւ տը-
 պարանի վարչութիւնը:

Պոլսոյ մէջ երկար տարիներ ժողովրդա-
 պետ եղած է Ս. Աստուածածին եկեղեցւոյն,
 եւ խոստովանահայր Սաղըդ-Աղաճի Անարատ
 Յղութեան Քոյրերու վարժարանին մէջ:
 Քաղցր յիշատակներ ունէր այդ տեղէն եւ
 Քոյրերը մեծ յարգանքով ու խանդաղատան-
 քով կ'օգտուէին իր խորհուրդներէն ու օրի-
 նակէն. հանդուցեալը առանց վարանելու,

առանց նայելու ցուրտին ու բուքին, տաքին կամ անձրեւին, նոյնիսկ առողջութեան, կը փութար անոնց օգնելու ամէն առիթի մէջ, յաճախ նաեւ թատերական ներկայացումներու եւ տօներու առիթով ընտանեկան նիւթեր եւ ոտանաւորներ կը պատրաստէր:

Հանգուցեալը ունի հրատարակութիւններ. թարգմանած է հոգակաւոր Տէ Ամիչիսի Սիրտ (տպ. 1912, 1927, էջ 412) եւ Ոստանիկ լեզու (տպ. 1921, էջ 312) զբերքը. յօրինած է Փերականութիւնն իտալերէն լեզուի, միջին դասընթացք, էմիլ Օթթոյի ոճով (տպ. 1907, 1931, էջ 351), Գրագիտութիւն, միջին եւ բարձրագոյն շրջան (տպ. 1932, էջ 344). թարգմանած է նմանապէս փոքրիկ թատերախաղեր, ինչպէս Փելլեկրոյ Փիւլա (տպ. 1916), Առաջին անգամ ի Միլան (տպ. 1917), Բարեկեդանի վերջին իրիկունը (տպ. 1931), Փերնարտ եւ Ալփրետ (տպ. 1931): Հրատարակած է նաեւ Փ. Յ. Գուլդ-ի Կեանքի ցախօրեակին բարոյական դասերու զեւբը, պատկերադարձ (տպ. 1931, էջ 382):

Անխոնջ թարգմանող մը եղած է ան, եւ ձեռագիր թողած է նաեւ ուրիշ բազմաթիւ թարգմանութիւններ: Նմանապէս ձեռագիր կը մնայ իր մէկ ազգագրական զբերիլը Արարիկի սովորութիւններուն, բարբերուն եւ պաւստաբարբառին մասին:

1950-ի աշնան վերջնականապէս վանք վերադարձած էր. աչքերու վիրաբուժական զործողութիւն մը կրեց, սրմէ վերջ շատ լաւացեր էր. կուրծքի ծանր հաղ մը ունէր, որ զինք կը տանջէր, այլապէս շատ լաւ էր. ընկերական, զուարթ եւ չէն բնավորութեամբ ուրախութիւն կը պատճառէր ամէնուն. սըրտի տկարութիւնը բոլորովին անձանօթ էր մեզի եւ անակնկալ մը եղաւ երբ Փետրուար 8-ին տեսանք զինքը անկողին դամուած ու սրտի տաղնապէս՝ յանկարծակի ուժասպառ եւ տկար:

Համակամ էր իր հիւանդութեան օրերուն եւ կարծէք նախադաւով արադահաս վախճանը՝ հոգեպէս պատրաստուած էր սուրբ խորհուրդներով:

Յուզարկաւորութիւնը տեղի ունեցաւ Փետրուար 26-ին:

Ճիշտ տարի մը առաջ հոգին յանձներ էինք իր սիրելի Յակօբը, Հ. Թէոօր Վրդ. Սիրունեանը. սիրելիին ետեւէն ահա ինքն ալ թոռ երկինք, վերէն բարեխօս ըլլալու Մըխիթարեան Ուխտին եւ շնորհի առատահոս պարգեւներով մխիթարելու բոլոր սպաւորներս:

Հանգի՛ստ յաւիտենական իր հողոյն:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ



Շ Ն Ո Ր Հ Ա Ա Ա Ա Ո Ւ Թ Ե Ս Մ Բ Ս Տ Ա Յ Ա Վ Ե Ն Ք

ԱԶՆԱՒՈՐԵԱՆ ԱՐԱՄ. - Հայրենի յուշեր (պատմութեամբ): Տիրպոյն, Միչիկըն, տպ. Եփրատ (Նիւ Եօրթ). 1952, էջ 175 (նուէր հեղինակէն):

ԲԱՆՏԻԿԵԱՆ ՍԱՐԳԻՍ. - Արեւոտ ամպեր: Պէյբուրթ, տպ. Օլիմբիք, 1951, էջ 171 (նուէր հեղինակէն):

ԲԱՐՍԵՂԵԱՆ Մ. ՄԱՍԼԷՆ. - Համադրական բառարան Ֆրանսերէնէ-Հայերէն: Ազգասնդրիտ, տպ. Ա. Ստեփանեան, 1951, էջ 896 (կազմբւած, նուէր հեղինակէն):

ԳԷ-ԱՄԻՉԻՍ Է. - Կարմիր մեխակ. պատմութեամբ: Թրգմն. Վարդանեան Բ.: Թեհրան, տպ. Ալիք, 1952. (Բ. տպագրութիւն), էջ 28: (Երկու օրինակ, նուէր հեղինակէն):

Դ՝ ԷՐՎԻԼԻ. - Նախապատմական մանուկի արկածները (պատմութեամբ): Թրգմն. Յովսէփ Թաղատեան: Թեհրան, տպ. Իրանշափ, 1952, էջ 68: (Երկու օրինակ, նուէր հեղինակէն):

ԵԱԶԸՃԵԱՆ Յ. ԽԱՉԻԿ. - Յիշատակարան: Ֆրէզնոյ, Քալիֆ. տպ. Ասպարկղ-ի, 1951, էջ 105 (նուէր հեղինակէն):

ԹԱԴԷՈՍԵԱՆ ՆԱԶ. (ԾԱՂԻԿ). - Երկու ձերբորդատուներ. (սիրավէպ - չորս արարուածով): Լոս-Անճէլըս, Քալիֆ. տպ. Հորիզոն, 1951, էջ 45: (Երկու օրինակ, նուէր հեղինակէն):

ԺԱՄԿՈՉԵԱՆ ԲԵՆԻԱՄԻՆ Կ. - Հայնի, տեղադրական-ազգագրական-պատմական: Պէյբուրթ, տպ. Տօնիկեան, 1952, էջ 459 (նուէր հեղինակէն):

ՆԱՐԳՈՒՆԻ ՇԱԽԱՐՇ. - Վարդամատեան (Հէք-Լաֆլեր եւ պատմութեամբ, բազում օտար պարագներէ): Փարիզ, տպ. Տէր Յակօբեան, 1952, էջ 192:

ԵՐՁԱՆԻԿ տարեգիրք 1952. (ԻԳ. տարի) Գրական, գեղարուեստական, բանասիրական, գիտական, տնտեսական, անտեսական, երգիծական յօդուածներով. կազմեց Բագարատ Թեւեան: Իսթանպուլ, տպ. Վարօլ, 1952, էջ 160 (նուէր հեղինակէն):

ՊԱՅՔԱՐ նոր տարւոյ բացատրիկ 1952: Պոսթրն, տպ. Պայքար, էջ 319:

ԺՂՈՎԱՅՈՒՐ գրականութեան եւ արուեստի, թիւ 8. (Մատենաշար «Շարժում» թ. 8): Պէյբուրթ, 1952, էջ 112:

ՔԱՐԷՆ ԷՓՓԷ ազգային ճեմարան Հայկալի: Հայկալ, տպ. Արեւելք, 1952, էջ 29:

* * *

Atamian David. - Mountain of the Moon and Other Poems. New York, Exposition Press, 1951, pg. 62.

Dédéyan Christian. - Le Vivier d'étoiles. Paris, éd. Grasset, 1945, pg. 329.

Dédéyan Christian. - Prière à l'ange mort, suivi de Passion d'Images. Casterman, 1947.

Dédéyan Christian. - Le jeu des hommes. Delresse, 1941.

Dédéyan Christian. - Haut e mer. Delresse, 1943.

Dédéyan Christian. - La musique perdue. Delresse, 1942.

Dédéyan Christian. - Les Noces de cristal. Bernard Grasset, 1946.

Dédéyan Christian. - Alain - Fournier et la réalité secrète. Jullvars, 1948.

Issahakian Arédik. - Abou - Lala - Mahari. Poème en sept chants. Tr. par Jean Minassian. Paris, 1952, pg. 34.

Gauthier Maximilien. - Gurdjan. Paris, 1952, pg. 13 + tbl. XXX.

